

ՀՅՈՒՄ. ԱՇԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՆ Ճ. ՎԱՐԴԱՊԵՏԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր տեղակալ Ամենասպատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի հրամանով Հյուսիսային Ամերիկայի Հայոց առաջնորդ Հաստատվելուց հետո բարձրավարտիվ Տ. Տիրան ծ. վարդապետ Ներսոյանը ստանձնելով իր առաջնորդական պաշտոնը Հյուսիսային Ամերիկայի Հայերին ուղղած իր շրջաբերական թղթի մեջ հորդոր է կարդում Ամերիկայն Հայության նիխրընել Մայր Հայրենիք Սովետական Հայաստանին և Մայր Աթոռ Ս. Խջմիածնին:

Ամերիկահայ «Լրաբեր» թերթը այս կասպակցությամբ դրում է.

—ՈՒՆԻՆՔ ՓՈՔԻ ԱՅԻ ՓԱՌԱՎՈՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԿԸ Տ. ՏԻՐԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹՈՒՂԹԻՆ ՄԵԶ :

Առաջնորդարանի պաշտոնաթերթ «Հայաստանյաց Եկեղեցի»-ի գեկտեմբերի համարին մեջ հրատարակվեցալ Տ. Տիրան ծ. վարդապետ Ներսոյանի առաջին պատգամը. «ԹՈՒՂԹ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ, ԱՌԱՄԵՆԱՑ ԱԶԳԻՒ ՀԱՅՈՒԹ Ի ՀՅՈՒՄԻՍԱՎԵԻՆ ԱՄԵՐԻԿԱ»:

Ամերիկահայոց երիտասարդ, կորովի և դժունական Առաջնորդը իր պատղամը կովկի հետևյալ պարբերություններում:

«Աստուծու կամոք, ժողովրդյան ներկայացուցչաց ընտրությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աղջընտիր Տեղակալին հրամանով կոչված ենք Ամերիկայի Հայոց Առաջնորդության կարևոր պաշտոնին, ի սպասարկություն մեր Սուրբ եկեղեցվոյն:

Լիովին դիտակ ենք մեր առաջիկա

դործի ծանրութեան և դժվարությանց և նախ Աստուծու և ապա Անոր ժողովրդին առջև մեր պատասխանատվության: Այլ և դիտակ ենք մեր տկարության և անբավականության տանելու այն ընոները, դորս հոգիներու տեսչության դործը պարտադիր կընծայէ կրել Քրիստոսի հոռը դեպի «Պալար վայրեր» առաջնորդելու կոչված անձերուն:

Արդի աշխարհի և հատկապես Ամերիկայի մեջ դժվարին է դարձած Քրիստոսի արդիին մշակությունը, առավել ևս մեզ Հայոց համար, որ «ածու փոքր» ենք Քրիստոնեական եկեղեցվու ընդհանուր դաշտին մեջ: Վասն զի արդարու ի՞նչպես հընար է այլ վայրերու և այլ ժամանակներու կլիմային մեջ ծլիլ ու ծաղկիլ, սովորած Հայկական հոգևորականության սերմերն արդյունավորել Ամերիկայն հորիզոններու ներքեւ, և այժմյան այլասարադ կյանքի դետանին վրա: Ի՞նչպես հնար է վլրման հոգվ» ի մի կաղել այս ընդարձակ երկրի մեջ ցրված Միացյալ Նահանգաց մեծ աղոթին մեջ տարրացած մեր ժողովուրդին բեկորները: Ի՞նչպես հնար է լսել ընել անոնց ձայնը մեր ապօքին և եկեղեցին, երբ կապակսին մեղի մեր կարյաց պետքը լրացնող դպրոցներ և դործին բավական հոգևորականներ և ուսւցիչներ, երբ «լայն և ընդարձակ ճանապարհը այնքան բազում ուղևորներ ունի, երբ ճշմարիտ իմաստության ձայնը տակալ կնվազի և հոգևոր հիմանդրության ենթակա շատեր աստիւծային բժշկին դեղատվությունը կմերժեն»:

Թվելե վերջ այս դժվարությունները, զորս կը գիմակրավե Հայաստանեայց և կեղեցին և Հայ աղղը Միացյալ Նահանդներու մեջ, նորին գերապատվությունը կը հայտարարե.

«Այս՝ ճշմարիտ է, որ ունինք փոքր, այլ փաստավոր մեր Սովետական Հայաստանը, մեր սիրելի Հայրենիքը, որ լուսավոր ու զորեղ դուրս պիտի զա տվեզերական այս երկրորդ պատերազմի թոհ ու բահին մեջին և պիտի առնե ժողովուրդներու այս վեթիարի և արյունահեղ կովին մեջն կարմիր ու զեղեցիկ, Հաղթական ժողովուրդներու շարքին։ Ճշմարիտ է, որ անցյալ պատերազմին մեր կրած եղերտկան Հարվածներուն նմանները չայցելեցին՝ մեղի այս անդամ, և մեծ է ողերությունը մեր ժողովուրդին ամենուրեք՝ մեր արյան եղբայրներուն մշակութային վերելքին և ուազմական արխության ի տես։ վառ է տակառիին մեր հայրենակիցներուն մեջ ամենուրեք իրենց նախնեաց հոգիին հուրը, զոր ավելի կը բորբոքե երջանիկ աստաղայի մը հույսը։ Եվ այս բոլորն իրենց չոշափելի աղղեցությունն ունին Ամերիկայի մեջ մեր ժողովուրդին վրա։

Այսու հանդերձ սփոփարար այս իրողությունները մեր դժվարությունները չեն բառար ինքնարերարար։ Մեր պարտքն է

նպաստավոր այս կացութենեն օպտվիլ և մեղի տրված պատեհությունները որոշ և հստակ ըմբռնած վախճանի մը իրազորձման ի սպաս զնել։ Մեր պարտքն է շահարկել հողեկան այն դրամալլուխը, դորունինք մեր եկեղեցիու և աղբին զավակիներուն սրտին խորը թաղված, ըստ հրամանի Տյառն, թե «պարտ էր քեզ արկանել զարծաթը իմ ի սեղանաւորս»։

«Վերջապես հիշեցեք, որ զամարզան աղպերու եկվորները բաղկացած Միացյալ Նահանգներու այս մեծ ազգի ծոցին մեջ մենք Հայերս հողեռոր ընտանիք մը կը կազմենք։ Հավատարիմ և նովրյալ Ամերիկյան այս նոր հայրենիքին՝ նաև հավատարիմ եղեք և նովրյեցեք մեր հողեռ հայրենիքին, որ կապրի սոռակելապես մեր եկեղեցիին մեջ։ Մեր ընտանեկան փոքր վեճերը թող չվհասեցնեն ղձեղ երբեք։ Նայեցեք մակերեսի այդ փոթոթություններն և ալեկոծություններն ավելի խորը, և հոն ձեր միությամբը զորացեք։ Միասին մտածելու, միասին զգալու և միասին գործելու Քրիստոնեական Համերաշխության ասաբինությունը մշակեցեք, խոնարհության և սիրո սերմերն աճեցնելով ձեր հողիներուն մեջ և ձեր շուրջը Ա. Հոգվոյն շնորհքներովը ուռճացած ամեն բաժանում և հերձված բուժելու ջանացեք քաղցրության և ներողության բալասանով։

(«Լրաբեր», Բել, 80, 1945.)

